«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

## Բովանդակություն

| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 5 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 9 |

KPMG

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ

Տնօրենների խորհրդին

Մենք իրականացրել ենք «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

## *Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

## *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

## *Եզրակացություն*

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

## *Հանգամանքների շեշտադրում*

Առանց ձևափոխված կարծիք արտահայտելու՝ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի (բ) կետին, որտեղ նշվում է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը կրել է 35,244,902 հազար դրամ գումարով վնաս, և նշված ամսաթվի դրությամբ Խմբի ընթացիկ պարտավորությունները գերազանցում էին ընթացիկ ակտիվները 172,944,369 հազար դրամով: Այս հանգամանքները, ծանոթագրություն 2-ի (բ) կետում ներկայացված այլ հարցերի հետ մեկտեղ, վկայում են էական անորոշության առկայության մասին, որը կարող է էական կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Խմբի կարողության վերաբերյալ:

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել նաև այն հանգամանքին, որ ներկայացված համադրելի տվյալները, բացառությամբ համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 8-ում նկարագրված ճշգրտումների, հիմնված են Խմբի 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2015թ. նոյեմբերի 23-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Որպես 2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 8-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են 2014թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալները վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով, նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Խմբի 2014թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ կիրառել որևէ այլ ընթացակարգեր այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հետ կապված՝ բացառությամբ նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Խմբի 2014թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր եզրակացությունում չի ներկայացվում վերապահում այս հարցի հետ կապված:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia cjsc

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
10 հունվարի 2017թ.

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2015թ. | 31 դեկտեմբերի 2014թ. | 31 դեկտեմբերի 2013թ. |
|---|---|---|---|---|
| | | | Վերահաշվարկված | Վերահաշվարկված |
| Ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ | 17 | 101,418,336 | 121,330,041 | 94,352,680 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 199,024 | 164,161 | 89,854 |
| Հանքարդյունաբերական գույք | 18 | 38,679,890 | 36,445,351 | 20,972,393 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | | 1,461 | 4,610,462 | 6,528,303 |
| Տրված փոխառություններ | | - | 57,734 | 56,800 |
| Փոխհատուցելի ԱԱՀ | | 474,715 | 3,349,277 | 2,125,255 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 16 | 1,247,671 | 469,641 | 305,827 |
| Կանխավճար շահութահարկի գծով | | - | - | 132,339 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | 14,632 | 14,632 | 14,632 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **142,035,729** | **166,441,299** | **124,578,083** |
| | | | | |
| Պաշարներ | 19 | 13,024,309 | 9,944,253 | 4,198,195 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 20 | 15,176,469 | 17,343,869 | 14,593,829 |
| Կանխավճարված ֆինանսական ծախսեր | | - | - | 975,687 |
| Տրված փոխառություններ | | 70,967 | 8,487 | 8,487 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21 | 3,179,958 | 2,087,415 | 1,617,182 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **31,451,703** | **29,384,024** | **21,393,380** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **173,487,432** | **195,825,323** | **145,971,463** |
| | | | | |
| **Սեփական կապիտալ** | | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 22 | 3,069,716 | 3,069,716 | 3,069,716 |
| Չբաշխված շահույթ | | (26,639,519) | 1,380,771 | 18,470,093 |
| **Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ** | | **(23,569,803)** | **4,450,487** | **21,539,809** |
| Չվերահսկվող բաժնեմասեր | 23 | (8,312,667) | (1,088,055) | 3,973,466 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **(31,882,470)** | **3,362,432** | **25,513,275** |
| | | | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 25 | - | - | 100,997,266 |
| Պետական շնորհ | | 65,586 | 67,112 | 68,637 |
| Տեղանքի վերագնահատման գծով պահուստ | 26 | 433,529 | 380,454 | 525,837 |
| Վճարվելիք ԱԱՀ | | 474,715 | 1,907,511 | 2,125,256 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **973,830** | **2,355,077** | **103,716,996** |
| | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 25 | 193,289,668 | 185,005,498 | 11,990,117 |
| Տեղանքի վերագնահատման գծով պահուստ | | 80,153 | 65,943 | 111,823 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 27 | 11,021,989 | 4,930,616 | 4,639,252 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 4,262 | 105,757 | - |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **204,396,072** | **190,107,814** | **16,741,192** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **205,369,902** | **192,462,891** | **120,458,188** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **173,487,432** | **195,825,323** | **145,971,463** |



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 56-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնթգ. | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|---|
| | | | Վերահաշվարկված |
| Հասույթ | 10 | 72,695,179 | 31,630,854 |
| Վաճառքի ինքնարժեք | 11 | (49,944,201) | (29,281,878) |
| **Համախառն շահույթ** | | **22,750,978** | **2,348,976** |
| Այլ եկամուտ | 12 | 1,257,743 | 346,285 |
| Իրացման ծախսեր | | (756,425) | (328,040) |
| Վարչական ծախսեր | 13 | (4,133,782) | (1,883,532) |
| Այլ ծախսեր | 14 | (30,332,129) | (376,950) |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | | **(11,213,615)** | **106,739** |
| Զուտ ֆինանսական ծախսեր | 15 | (24,559,363) | (22,020,300) |
| **Վնաս նախքան շահութահարկով հարկումը** | | **(35,772,978)** | **(21,913,561)** |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 16 | 528,076 | (237,282) |
| **Վնաս և ընդամենը համապարփակ ծախս տարվա համար** | | **(35,244,902)** | **(22,150,843)** |
| | | | |
| **Վնաս և ընդամենը համապարփակ ծախս վերագրելի՝** | | | |
| Ընկերության սեփականատերերին | | (28,020,290) | (17,089,322) |
| Չվերահսկող բաժնեմասերին | 23 | (7,224,612) | (5,061,521) |
| **Վնաս և ընդամենը համապարփակ ծախս տարվա համար** | | **(35,244,902)** | **(22,150,843)** |

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2017թ. հունվարի 10-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Լուսինե Մելքոնյան
Գլխավոր տնօրեն

Համլետ Հարությունյան
Գլխավոր հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված

| հազ. դրամ | Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրելի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Բաժնետիրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Ընդամենը | Չվերահսկող բաժնեմասեր | Ընդամենը սեփական կապիտալ |
| **Մնացորդը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ** | 3,069,716 | 18,470,093 | 21,539,809 | 3,973,466 | 25,513,275 |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | |
| Վնաս տարվա համար (վերահաշվարկված) (ծնթզ. 8) | - | (17,089,322) | (17,089,322) | (5,061,521) | (22,150,843) |
| **Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)** | **3,069,716** | **1,380,771** | **4,450,487** | **(1,088,055)** | **3,362,432** |
| | | | | | |
| **Մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ** | 3,069,716 | 1,380,771 | 4,450,487 | (1,088,055) | 3,362,432 |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | |
| Վնաս տարվա համար | - | (28,020,290) | (28,020,290) | (7,224,612) | (35,244,902) |
| **Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **3,069,716** | **(26,639,519)** | **(23,569,803)** | **(8,312,667)** | **(31,882,470)** |



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 56-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնրգ. | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Պատվիրատուներից ստացված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ | | 79,616,696 | 33,481,099 |
| Մատակարարներին և աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ | | (51,702,976) | (43,757,149) |
| Պետական բյուջեից ստացված ԱԱՀ-ի փոխհատուցում | | 12,260,193 | 3,468,407 |
| Վճարված շահութահարկ | | (287,000) | (163,000) |
| Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | | (6,096,779) | (4,143,142) |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր նախքան տոկոսների վճարումը** | | **33,790,134** | **(11,113,785)** |
| Վճարված տոկոսներ | | (7,461,836) | (1,456,344) |
| **Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | | **26,328,298** | **(12,570,129)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | | (16,423,362) | (23,214,440) |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (21,076) | (87,233) |
| Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից | | 20,760 | 21,471 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(16,423,678)** | **(23,280,202)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | | 44,789,329 | 80,117,215 |
| Վարկերի և փոխառությունների մարում | | (53,654,656) | (43,982,789) |
| **Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | | **(8,865,327)** | **36,134,426** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **1,039,293** | **284,095** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ | | 2,087,415 | 1,617,182 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 53,250 | 186,138 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 21 | **3,179,958** | **2,087,415** |



Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 56-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ միասին:

| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|

1. Հաշվետու կազմակերպություն 10
2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ 11
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ 12
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում 12
5. Հանքաքարի պաշարներ և շահագործման լիցենզիա 14
6. Չափման հիմունքներ 14
7. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 15
8. Անճշտությունների ուղղում 27
9. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 28
10. Հասույթ 30
11. Վաճառքի ինքնարժեք 30
12. Այլ եկամուտ 31
13. Վարչական ծախսեր 31
14. Այլ ծախսեր 31
15. Զուտ ֆինանսական ծախսեր 32
16. Շահութահարկ 32

| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|

17. Հիմնական միջոցներ 36
18. Հանքարդյունաբերական գույք 39
19. Պաշարներ 40
20. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր 40
21. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 40
22. Կապիտալ և պահուստներ 41
23. Չվերահսկվող բաժնեմասեր 42
24. Կապիտալի կառավարում 43
25. Վարկեր և փոխառություններ 44
26. Տեղանքի վերականգնման գծով պահուստ – ոչ ընթացիկ 46
27. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր 47
28. Իրական արժեք և ռիսկերի կառավարում 47
29. Պայմանական դեպքեր 53
30. Գործառնական ռիսկեր 54
31. Գործարքներ կապակցված կողմերի հետ 55

# 1. Հաշվետու կազմակերպություն

## (ա) Հայաստանի գործարար միջավայր

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## (բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունները (միասին՝ «Խումբ») ներառում են փակ բաժնետիրական ընկերությունները՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն և Կիպրոսում գրանցված ընկերությունը: Ընկերությունը հիմնադրվել է 1997թ. օգոստոսին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Ընկերության միակ խոշոր դուստր կազմակերպությունը «Թեղուտ» ՓԲԸ-ն է («Դուստր կազմակերպություն»), որը հիմնադրվել է 2006թ. մայիսին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Հիմնադրումից ի վեր Դուստր կազմակերպությունն ամբողջովին պատկանում էր Ընկերությանը: 2011թ. նոյեմբերին, որպես «ՎՏԲ» Խմբի հետ կնքված ֆինանսավորման պայմանագրի մաս (ծանոթագրություն 25), «Թեղուտ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը փոխանցվեց Կիպրոսի Հանրապետությունում գրանցված՝ «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ» ընկերությանը: Ընկերությանը պատկանում է «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ»-ի բաժնետոմսերի 50.05%-ը, մնացած բաժնետոմսերը պատկանում են «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի կողմից ղեկավարվող «ՎՏԲ» Խմբին: «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ»-ի բաժնետոմսերի 49.95%-ը մասնակցության իրավունք չեն տալիս, սակայն պաշտպանական իրավունք են տալիս «ՎՏԲ» Խմբին: Համաձայն «ՎՏԲ» Խմբի հետ կնքված պայմանագրի պայմանների՝ այս 49.95% բաժնետոմսերից 24.9%-ը հետ կգնվի Ընկերության կողմից 180 օրվա ընթացքում՝ վարկերի ամբողջական մարումից հետո, այն գումարով, որը կհաշվարկվի նախապես որոշված բանաձևով, որը հիմնված է վարկի փաստացի մնացորդների, մինչև «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից արտադրությունը սկսելը մնացած ամիսների քանակի և մինչև նախատեսված հզորությունն ապահովելը մնացած ամիսների քանակի վրա: Քանի որ 24.9% բաժնետոմսերը տալիս են միայն պաշտպանական քվերակության իրավունքներ և նախապես որոշված գումարը ստանալու իրավունք, այս բաժնետոմսերի համար չի ճանաչվում չվերահսկող բաժնեմաս: Այնուամենայնիվ «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ»-ի մնացած 25.05% բաժնետոմսերի համար, որոնք պատկանում են «ՎՏԲ» Խմբին, ճանաչվում է չվերահսկող բաժնեմաս, քանի որ «ՎՏԲ» Խումբը, Ընկերության հետ ունեցած ֆինանսավորման պայմանագրի համաձայն, իրավունք ունի ստանալ «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ»-ի զուտ ակտիվներից ստացվող օգուտի համամասնական մասնաբաժինը: Ընկերությունն իրավունք ունի գնել այս բաժնետոմսերը վարկերի ամբողջական մարումից հետո 180 օրվա ընթացքում՝ այդ պահին բաժնետոմսերի իրական արժեքով:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փ. 19:

Ընկերության ներկայիս հիմնական գործունեությունը սև պղնձի արտադրությունն ու իրացումն է Ալավերդու պղնձաձուլական գործարանում, Հայաստանի Հանրապետությունում: Ներկայումս Ընկերության ողջ արտադրանքն իրացվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Դուստր կազմակերպության հիմնական գործունեությունը պղինձ-մոլիբդենային հանքաքարի արդյունահանումն ու հարստացումն է և պղնձի ու մոլիբդենի խտանյութերի արտադրությունն է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքի (Լոռու մարզ) շահագործման միջոցով՝ դուստր կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության միջև կնքված բնական ռեսուրսների արդյունահանման լիցենզիայի պայմանագրի շրջանակներում («Լիցենզիայի պայմանագիր»), որը վերանայվել է 2013թ. փետրվարի 20-ին: Լիցենզիայի պայմանագրի համաձայն՝ Դուստր կազմակերպության գործունեությունը լիցենզավորված է մինչև 2026թ. փետրվարի 8-ը: Այն սկսել է պղնձի խտանյութի արտադրությունը 2014թ. վերջում: 2015թ. ընթացքում պղնձի խտանյութ արտադրող գործարանը դարձել է ամբողջովին գործունակ:

Խմբի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում Ընկերության բաժնետոմսերի 100% սեփականատեր՝ պրն. Վալերի Մեջլումյանը, ով իրավասու է կառավարել Խմբի գործառնությունները իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա բաժնեմասեր ունի նաև Խմբին չպատկանող այլ ընկերություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 31-ում:

## 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

### (բ) Անընդհատություն

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը 187,156,769 հազար դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեքով վարկային պայմանագրեր ունի «ՎՏԲ» Խմբի հետ (ծանոթագրություն 25): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը խախտել է վարկային պայմանագրերի սահմանափակումները, ինչը թույլ է տալիս բանկերին պահանջել վարկերի մարումը ժամկետից շուտ: Այդ իսկ պատճառով, ոչ ընթացիկ վարկերը դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ: Արդյունքում, ընթացիկ պարտավորությունները գերազանցել են ընթացիկ ակտիվները 172,944,369 հազար դրամով: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթվի դրությամբ «ՎՏԲ» Խումբը չի օգտվել վարկի ժամկետից շուտ մարումը պահանջելու իրենց իրավունքից:

Վերը նշված հանգամանքները, պղնձի և մոլիբդենի գների վերջերս գրանցված զգալի անկման հետ մեկտեղ, և 2015թ-ին Խմբի կողմից 35,244,902 հազար դրամի չափով վնաս կրելու փաստը կարող են էական կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Խմբի կարողության վերաբերյալ, այդ իսկ պատճառով, այն կարող է ի վիճակի չլինել իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները բնականոն գործունեության ընթացքում:

Խումբը վերաբանակցել է բանկային վարկերի պայմանները և 2016թ-ին կնքել է նոր պայմանագիր : Նոր պայմանների համաձայն` մայր գումարի մարումները կիրականացվեն գործառնություններից ստացվող զուտ դրամական միջոցների հաշվին, որը թույլ կտա Խմբին մարել վարկը բնականոն գործունեության ընթացքում: Բացի այդ, ղեկավարությունն ակնկալում է, որ վերամշակվող հանքաքարի ծավալի աճի և ապագայում մետաղի գների սպասվող վերականգնման արդյունքում Խմբի գործունեության արդյունքները կբարելավվեն:

Բացի այդ, կապակցված կողմը հայտնել է, որ չի պահանջի իր կողմից տրամադրված ցպահանջ փոխառության ժամկետից շուտ մարումը:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում այնպիսի ճշգրտումներ, որոնք կարող են պահանջվել, եթե Խումբը չկարողանա շարունակել գործունեությունն անընդհատության հիմունքով:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով` հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշվում է այլ տեղեկատվություն:

## 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ձևավորված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվութունը, որոնք էական ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություններ 1 (բ) և 25 – չվերահսկվող բաժնեմասերի և ամորտիզացված արժեքով չափվող փոխառությունների հաշվառում,
- Ծանոթագրություն 2 (բ) – գործունեությունն անընդհատության հիմունքով շարունակելու ենթադրության կիրառում,
- Ծանոթագրություն 7 (գ) – ռոյալթիների գծով ծախսի դասակարգում,
- Ծանոթագրություն 18 – հանքային մարմնի բաղադրիչների որոշում և թափոնների գնահատում:

Այն ենթադրությունների և գնահատումների հետ կապված անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը (բացառությամբ իրական արժեքի չափումը), որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 5 – հանքաքարի պաշարների գնահատում և շահագործման լիցենզիայի ժամկետի երկարաձգում,
- Ծանոթագրություն 7 (թ) – հանքարդյունաբերական գույքի մաշվածություն,
- Ծանոթագրություն 17 – արժեզրկման ստուգում,
- Ծանոթագրություն 26 – տեղանքի վերականգնման գծով պահուստ,
- Ծանոթագրություն 29 (գ) – պայմանական հարկային պարտավորություններ:

(ա) Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 28-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

# 5. Հանքաքարի պաշարներ և շահագործման լիցենզիա

Հանքաքարի պաշարների քանակությունը գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Խմբի վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքաքարի պաշարների գնահատումները հիմնված են հորատանցքերի և այլ հանքանցքերի հանքաքարի նմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Թեղուտի հանքավայրի հանքաքարի պաշարների առաջին գնահատումն իրականացվել է 1991թ-ին Խորհրդային Միության պաշարների պետական հանձնաժողովի կողմից՝ կազմելով մոտավորապես 454 միլիոն տոննա: Խմբի կողմից հանքաքարի պաշարների վերջին գնահատումն իրականացվել է 2014թ-ին «Strathcona Mineral Services Limited» կողմից 890 մետր բացարձակ բարձրությունից վեր գտնվող հորիզոնների համար (որը կազմել է 162 միլիոն տոննա՝ ԽՍՀՄ Պաշարների պետական կոմիտեի գնահատուների համաձայն)՝ հիմք ընդունելով օգտակար հանածոների գնահատման միջազգային ստանդարտները: Այս վերագնահատմամբ հանքավայրի 890 մետր հորիզոնից վերև օգտակար հանածոների սահմանափակված պաշարներ կազմում են 147 միլիոն տոննա:

Որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ միներալիզացիայի ցածր աստիճան ունեցող հանքաքարի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքի հետագա օգտագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսումների փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի հանքաքարի պաշարների գնահատումների վրա:

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Լիցենզիայի պայմանագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մինչև 2026թ.: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունն ենթադրել է, որ լիցենզիայի գործողության ժամկետը կերկարաձգվի 2026թ-ից հետո՝ մինչև հանքաքարի պաշարների սպառվելը: Այս ենթադրությունը հիմնված է Հանքարդյունաբերության օրենսգրքի դրույթների վրա, որոնք նախատեսում են լիցենզիայի երկարաձգում ներկայացված դիմումի հիման վրա:

Վերը նշված գնահատումներն Խումբն օգտագործում է հիմնական միջոցների, հանքարդյունաբերական գույքի և ոչ նյութական ակտիվների արժեզրկումը և օգտակար ծառայության ժամկետները գնահատելիս:

# 6. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

## 7. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև բերվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները՝ համապատասխան էջերի նշումով:


| | | |
|---|---|---|
| (ա) | Համախմբման հիմունքներ | 15 |
| (բ) | Հասույթ | 16 |
| (գ) | Ֆինանսական ծախսեր | 17 |
| (դ) | Արտարժույթ | 17 |
| (ե) | Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ | 17 |
| (զ) | Շահութահարկ | 17 |
| (է) | Ռոյալթիներ | 19 |
| (ը) | Պաշարներ | 19 |
| (թ) | Հիմնական միջոցներ և հանքարդյունաբերական գույք | 20 |
| (ժ) | Ֆինանսական գործիքներ | 22 |
| (ի) | Արժեզրկում | 24 |
| (լ) | Պահուստներ | 26 |


### (ա) Համախմբման հիմունքներ

#### *(i) Դուստր կազմակերպություններ*

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող կազմակերպություններն են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպությունում չվերահսկվող բաժնեմասերի նկատմամբ կիրառելի վնասը բաշխվում է չվերահսկվող բաժնեմասերին նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկվող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

#### *(ii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ*

Ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

#### *(iii) Չվերահսկվող բաժնեմաս*

Չվերահսկվող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպությունում Խմբի բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում վերահսկողության կորստի, հաշվառվում են որպես բաժնային գործառնություններ:

(բ) Հասույթ

*Վաճառված ապրանքներ*

Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերն ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման ժամկետը կախված է առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից:

Սև պղնձի վաճառքի հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ ավարտվում է տարաների բեռնումը, կշռումը և կնքումը վաճառողի տարածքում՝ Ալավերդիում: Խմբի սև պղնձի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին վաճառքի պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի պատմական արժենշված գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, սև պղնձի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ գնորդին սեփականության հետ կապված ռիսկերը և հատույցները փոխանցելուց հետո:

Ռիսկերի և հատույցների փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը բեռնվում են բեռնատար մեքենաներ՝ գործարանում: Խմբի խտանյութի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին վաճառքի պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի պատմական արժենշված գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, պղնձի խտանյութի գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մեկից երեք ամիս՝ գնորդին սեփականության հետ կապված ռիսկերը և հատույցները փոխանցելուց հետո:

Պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ ստացված կանխավճար, համապատասխան ճշգրտում կատարելով հասույթի գծով, և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) հասույթի միջոցով՝ հաշվի առնելով ապրանքի ֆորվարդային կորը մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը:

(գ) Ֆինանսական ծախսեր

Խմբի ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային ծախսերը,
- տեղանքի վերականգնման պահուստի զեղչի գծով ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(դ) Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Իրական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

### *(i) Ընթացիկ հարկ*

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

### *(ii) Հետաձգված հարկ*

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով:

Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է ընթքացիկ հարկային պարտավորությունները մարել և ընթացիկ հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս՝ Խումբը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը: Խումբը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր չստուգված հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Խմբին փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային

պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է նման գնահատումը:

(է) Ռոյալթիներ

Ռոյալթին պետական բյուջե վճարման ենթակա գումարն է, որը հաշվարկվում է կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն և հիմնված է լիցենզավորված գործառնությունների շահութաբերության մակարդակների վրա: Ռոյալթիները հաշվարկելիս կիրառվում են այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Ռոյալթիները բաղկացած են երկու բաղադրիչից՝ հասույթի 4%-ի չափով հաշվարկվող ռոյալթի և հարկվող զուտ շահույթի 12.5%-ի չափով հաշվարկվող ռոյալթի՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների ու պահանջների համաձայն:

Ղեկավարությունը գտնում է, որ ռոյալթիների գծով ծախսը չի դիտարկվում որպես շահութահարկ, քանի որ ընդհանուր հասույթի գործոնը (համախառն չափանիշ) էական է վճարվելիք ռոյալթիի գումարի հաշվարկում: Ռոյալթիները հաշվառվում են որպես այլ գործառնական ծախսեր:

(ը) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Խմբի պղնձի խտանյութի առքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի պատմական արժենշված գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, պղնձի խտանյութի գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մեկից երեք ամիս՝ առաքման ամսից հետո:

Խմբի պայմանականորեն գնանշվող առքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք, հիմնական ֆինանսական գործիքի հետ չկապակցված լինելու պատճառով, պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է ապագա գնի հիման վրա որոշված վերջնահաշվարկի գինը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ ստացված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) վաճառքի ինքնարժեքի միջոցով՝ հաշվի առնելով ապրանքի ֆորվարդային կորը մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը:

## (բ) Հիմնական միջոցներ և հանքարդյունաբերական գույք

### *(i) Ճանաչում և չափում*

Հիմնական միջոցների միավորների սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսումները, տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «Այլ եկամուտ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

### *(ii) Հետագա ծախսումներ*

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

### *(iv) Հանքարդյունաբերական գույք*

Արտադրական փուլի ընթացքում կրած մակաբացման ծախսումներից որպես կանոն կարելի է ստանալ երկու տեսակի օգուտ՝ պաշարների արտադրություն կամ բարելավված հասանելիություն հանքաքարին, որը կարդյունահանվի հետագայում: Այն դեպքում, երբ մակաբացման գործունեությունից առաջացող օգուտն արտահայտվում է ժամանակաշրջանի ընթացքում արտադրված պաշարների տեսքով, մակաբացման ծախսումները հաշվառվում են որպես այդ պաշարների արտադրման ծախսումների մաս: Երբ ստացվող օգուտն արտահայտվում է հետագայում արդյունահանման ենթակա հանքաքարի հասանելության բարելավման տեսքով, ապա այս ծախսումները ճանաչվում են որպես ոչ ընթացիկ ակտիվ, որն անվանվում է «մակաբացման գործունեության ակտիվ» կամ «հանքարդյունաբերական գույք»՝ հետևյալ չափանիշները բավարարելու դեպքում.

- հավանական է, որ մակաբացման գործունեության հետ կապված ապագա տնտեսական օգուտները (հանքաքարի հասանելության բարելավում) կհոսեն կազմակերպություն,
- կազմակերպությունը կարող է նույնականացնել հանքաքարի այն բաղադրիչը, որին հասանելիությունը բարելավվել է, և
- այդ բաղադրիչի գծով մակաբացման գործունեության ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել:

Վերը նշված չափանիշներից որևէ մեկը չբավարարելու դեպքում, մակաբացման արտադրական ծախսումները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես գործառնական ծախսեր կատարվելու ժամանակ կամ ներառվում են արտադրված պաշարների ինքնարժեքում:

Հանքաքարի բաղադրիչները նույնականացնելիս Խումբը սերտորեն համագործակցում է հանքարդյունաբերական գործունեության բաժնի աշխատակիցների հետ՝ հանքավայրի պլանը վերլուծելու համար: Որպես կանոն, բաղադրիչը հանդիսանում է ընդհանուր հանքային մարմնի ենթաբազմությունը, և հանքը կարող է բաղկացած լինել մի քանի բաղադրիչներից:

Մակաբացման գործունեության ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանքաքարի նույնականացված բաղադրիչին հասանելիությունը բարելավող՝ մակաբացմանն ուղղակիորեն վերաբերող ծախսումների հանրագումարն է՝ գումարած ուղղակիորեն վերագրելի վերադիր ծախսերի տեղաբաշխումը:

Մակաբացման արտադրական ծախսումներն արտադրված պաշարների և մակաբացման գործունեության ակտիվի միջև բաշխելու համար օգտագործվում է արտադրության համապատասխան չափանիշ: Արտադրության այդ չափանիշը հաշվարկվում է հանքաքարի նույնականացված բաղադրիչի համար և օգտագործվում է որպես ուղենիշ՝ որոշելու ապագա օգուտների ստեղծման համար տեղի ունեցած լրացուցիչ գործունեությունների ծավալները: Խումբն օգտագործում է հանքաքարի արտադրության տվյալ ծավալների համար արդյունահանված թափոնների ծավալները՝ համեմատած ակնկալվող ծավալների հետ:

Մակաբացման գործունեության ակտիվը հաշվառվում է որպես հանքարդյունաբերական գույք հանդիսացող՝ գոյություն ունեցող ակտիվի լրացում կամ բարելավում:

Մակաբացման գործունեության ակտիվի մաշվածությունը հետագայում հաշվարկվում է կիրառելով արդյունքի միավորի մեթոդը հանքային մարմնի նույնականացված բաղադրիչի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում, որի հասանելիությունը բարելավվել է մակաբացման գործունեության արդյունքում: Տնտեսապես փոխհատուցելի պաշարները, որոնք ներառում են առկա և հնարավոր պաշարները, օգտագործվում են հանքային մարմնի նույնականացված բաղադրիչի ակնկալվող օգտակար ծառայությունը որոշելու համար: Մակաբացման գործունեության ակտիվն այնուհետև հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հանքարդյունաբերական գույքը ներառում է նաև հետախուզման և գնահատման ծախսումները, որոնք վերաբերում են նախքան հանքի մշակման աշխատանքները սկսելն Ընկերության կողմից հանքաքարի պոտենցիալ պաշարների հետախուզման և գնահատման ժամանակ կրած ծախսումներին, ինչպես նաև հանքի մշակման ծախսումները, որոնք ներառում են երկրաբանական և գեոֆիզիկական ուսումնասիրությունների, հետախուզական հորատման ու նմուշների փորձարկման ծախսումները, մոնտաժման և արտադրական սարքավորումների գծով ծախսումները, սկզբնական մակաբացման ծախսումները և նման աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

### *(iv) Մաշվածություն*

Հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե տվյալ բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած բաղկացուցիչների օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Հիմնական միջոցների բոլոր միավորների մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հանքարդյունաբերական գույքի գծով մաշվածությունը հաշվառվում է կիրառելով արդյունքի միավորի մեթոդը՝ հիմք ընդունելով հանքաքարի ընդհանուր գնահատված պաշարները և փաստացի արդյունահանված ու մշակված հանքաքարը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների էական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

| | |
|---|---|
| • Շենքեր | 20-50 տարի |
| • Մեքենա-սարքավորումներ | 2-50 տարի |
| • Փոխադրամիջոցներ | 5-10 տարի |
| • Այլ | 1-5 տարի |
| • Հանքարդյունաբերական գույք | արդյունքի միավորի մեթոդ |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

## (ժ) Ֆինանսական գործիքներ

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասին:

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

### *(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում*

Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ֆինանսական ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Խումբն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

***Փոխառություններ և դեբիտորական պարտքեր***

Փոխառությունները և դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են ֆիքսված կամ որոշելի վճարումներով ակտիվներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Այս ակտիվներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասակարգը ներառում է ակտիվների հետևյալ դասերը՝ առևտրական և այլ դեբիտորական պարտքեր ու դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ***

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցների մնացորդները և ընթացիկ բանկային հաշիվները:

***(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում***

Խումբը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասում է այլ ֆիանանսական պարտավորությունների դասին: Նման ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

***(iii) Բաժնետիրական կապիտալ***

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

***(iv) Ածանցյալ ֆինանսական գործիքներ***

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրանց փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի ու հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն. առանձին գործիքը, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը, և համակցված գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

(ի) Արժեզրկում

*(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Խմբին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապանի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

*Ամորտիզացվող արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության կարծիքը, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

### *(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ*

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ վերջինիս դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները բաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները համասարաչափ հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**(ը) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

***(i) Տեղանքի վերականգնում***

Խմբի բնապահպանության քաղաքականության և կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն՝ հանքի տարածքի և աղտոտված հողատարածքի գծով տեղանքի վերականգնման պահուստը և հարակից ծախսերը ճանաչվում են հանքաքարի արդյունահանման և հողատարածքի աղտոտման պահին, որի պատճառը թափոնների կուտակումն է և պոչամբարի կառուցումը լիցենզիայով նախատեսված տարածքում:

Համապատասխան ակտիվը ճանաչվում է հիմնական միջոցների կազմում: Տեղանքի վերականգնման ծախսումները հաշվառվում են պարտավորությունը մարելու համար ակնկալվող ծախսումների ներկա արժեքով՝ կիրառելով դրամական միջոցների գնահատված հոսքերը: Դրամական միջոցների հոսքերը զեղչվում են նախքան հարկումը գործող ռիսկի գործոն չպարունակող դրույքով: Զեղչի գծով ծախսը ծախսագրվում է կատարվելու ժամանակ և ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես ֆինանսական ծախս:

Յուրաքանչյուր տարվա վերջում Խումբը վերաչափում է տեղանքի վերականգնման պահուստը՝ հիմք ընդունելով հաշվարկային գումարի լավագույն գնահատականը և զեղչի շուկայական դրույքը:

Տեղանքի վերականգնման պահուստի փոփոխությունները փոխում են համապատասխան ակտիվի սկզբնական արժեքը: Եթե տեղանքի վերականգնման պահուստի նվազումը գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա այդ գերազանցող գումարը պետք է ճանաչվի անմիջապես շահույթում կամ վնասում:

Համապատասխան ակտիվի մաշվող գումարի գծով մաշվածությունը հաշվարկվում է դրա օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Երբ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետը հասնում է իր ավարտին, տեղանքի վերականգնման պահուստի բոլոր հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակ:

# 8. Անճշտությունների ուղղում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը վերահաշվարկել է որոշ համադրելի տվյալներ՝ ստորև ներկայացված անճշտությունները ուղղելու նպատակով:

2014թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ Խումբը դասակարգել է կապակցված կողմից ստացված ցպահանջ փոխառության մի մասը որպես ոչ ընթացիկ պարտավորություն 2014 ու 2013 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ :

Որպես «ՎՏԲ» Խմբի հետ կնքված ֆինանսավորման պայմանագրի մաս՝ 2011թ-ին Խումբը դուստր կազմակերպության բաժնետոմսերի 25.05%-ը փոխանցել է «ՎՏԲ» Խմբին: Փոխանցման ամսաթվի դրությամբ այս բաժնետոմսերի 3,049,021 հազար դրամ գումարով իրական արժեքը ներառվել է վարկերի և փոխառությունների ամորտիզացված արժեքի հաշվարկում: Հետագայում, 2014թ-ին Խումբը վերագնահատել է այս բաժնետոմսերի արժեքը, որի արդյունքում վերջիններիս իրական արժեքի 6,224,000 հազար դրամով աճը նվազեցվել է վարկերից ու փոխառություններից և գրանցվել է աճ նույն գումարի չափով չբաշխված շահույթում: Վերագնահատման արդյունքում Խումբը գրանցել է նաև լրացուցիչ ֆինանսական ծախսեր 2014թ-ին: 2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը հակադարձել է 2014թ-ին ճանաչված վերագնահատումը և արդյունքում առաջացած ֆինանսական ծախսերը՝ ՖՀՄՍ համաձայն հետագա վերագնահատման տեխնիկական հիմքերի բացակայության պատճառով:

Վերահաշվարկների ազդեցությունը ներկայացված է ստորև բերվող աղյուսակներում:

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**

| հազ. դրամ | Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ | Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ |
|---|---|---|
| 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նախկինում ներկայացված գումար | 107,265,769 | 5,721,614 |
| Վերահաշվարկ | (6,268,503) | 6,268,503 |
| **Վերահաշվարկված գումարը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **100,997,266** | **11,990,117** |

| հազ. դրամ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ | Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ | Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ |
|---|---|---|---|---|
| 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նախկինում ներկայացված գումար | 6,693,164 | 8,674,825 | 12,619,644 | 167,073,461 |
| Վերահաշվարկ | (5,312,393) | (5,312,393) | (12,619,644) | 17,932,037 |
| **Վերահաշվարկված գումարը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,380,771** | **3,362,432** | **-** | **185,005,498** |

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն**

| հազ. դրամ | Վնաս և ընդամենը համապարփակ ծախս տարվա համար | Ֆինանսական ծախսեր |
|---|---|---|
| 2014թ. համար նախկինում ներկայացված գումար | (23,062,450) | (22,931,907) |
| Վերահաշվարկ | 911,607 | 911,607 |
| **Վերահաշվարկված գումարը 2014թ. համար** | **(22,150,843)** | **(22,020,300)** |

## 9. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

| Նոր կամ փոփոխված ստանդարտ | Պահանջների ամփոփ նկարագիր | Հնարավոր ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա |
|---|---|---|
| ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* | 2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»* ստանդարտի գործող ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը պարունակում է վերանայված ուղեցույցներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման համար, ներառյալ ֆինանսական ակտիվների արժեզրկման հաշվարկի համար կիրառվող նոր սպասվող վնասի մոդելը, և հեջի ընդհանուր հաշվառմանը վերաբերող նոր պահանջները: Այն ներառում է նաև ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական գործիքների ճանաչման ու ապաճանաչման ուղեցույցները:<br>ՖՀՄՍ 9- կգործի 2018թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ: | Խումբը գնահատում է ՖՀՄՍ 9-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա: |

| Նոր կամ փոփոխված ստանդարտ | Պահանջների ամփոփ նկարագիր | Հնարավոր ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա |
|---|---|---|
| ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ»* | ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ճանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ ՀՀՄՍ 18 *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11 *«Կառուցման պայմանագրեր»* և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 13 *«Հաճախորդի հավատարմության ծրագրեր»* պահանջները: Նոր ստանդարտի հիմնական սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը՝ ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն գումարով ներկայացնելու համար, որն արտացոլում է հատուցումը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների դիմաց: Նոր ստանդարտով կպահանջվեն նաև լրացուցիչ բացահայտումներ հասույթի համար, կտրամադրվի ուղեցույց նախկինում համապարփակ կերպով չուսումնասիրվող գործառնությունների համար, կկատարելագործվեն մի քանի բաղադրիչներից բաղկացած համաձայնություններին վերաբերող ուղեցույցները: ՖՀՄՍ 15 կգործի 2018թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ: | Խումբը գնահատում է ՖՀՄՍ 15-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա: |
| ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»* | ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 *«Վարձակալություն»*, ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ մեկնաբանություն 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ մեկնաբանություն 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»* սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները: Այս ստանդարտով այլևս չի կիրառվում  հաշվառման կրկնակի մոդելը վարձակալների համար, որով տարանջատվում են հաշվեկշռային ֆինանսական վարձակալությունը և արտահաշվեկշռային գործառնական վարձակալությունը: Փոխարենը, կիրառվում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել, որը նման է ներակայիս ֆինանսական վարձակալության հաշվառմանը: Վարձատուների համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, նրանք շարունակում են դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի: ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ»* ստադարտը կիրառելու պայմանով: | Խումբը գնահատում է ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա: |

## 10. Հասույթ

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Պղնձի խտանյութի վաճառք | 40,480,279 | - |
| Սև պղնձի վաճառք | 29,872,438 | 29,755,614 |
| Ոսկու խտանյութի վաճառք | 2,241,178 | 1,486,788 |
| Մատուցված ծառայություններ | 71,876 | 330,646 |
| Այլ ապրանքների վաճառք | 29,408 | 57,806 |
| | 72,695,179 | 31,630,854 |

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 19,654,066 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշված վաճառք (2014թ-ին՝ 6,618,029 հազար դրամ), որի իրական արժեքը կազմում էր մոտավորապես 18,924,428 հազար դրամ (2014թ-ին՝ 6,344,087 հազար դրամ)՝ ներառյալ պարունակվող ածանցյալ գործիքը:

## 11. Վաճառքի ինքնարժեք

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Պղնձի խտանյութ | 11,854,224 | 22,455,889 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 11,702,755 | 301,098 |
| Նյութեր | 11,332,675 | 2,285,057 |
| Աշխատավարձ | 5,112,416 | 885,599 |
| Էլեկտրաէներգիա և գազ | 3,841,535 | 1,660,669 |
| Արտաքին ընկերության կողմից մատուցված ծառայություններ | 2,646,364 | - |
| Ոսկու խտանյութ | 2,153,785 | 1,406,681 |
| Մատուցված ծառայությունների արժեքը | 60,206 | 248,625 |
| Այլ | 1,240,241 | 38,260 |
| | 49,944,201 | 29,281,878 |

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 3,716,595 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշված գնումներ (2014թ-ին՝ 7,737,580 հազար դրամ), որոնց իրական արժեքը կազմում էր մոտավորապես AMD 3,565,079 հազար դրամ (2014թ-ին՝ 7,087,156 հազար դրամ)՝ ներառյալ պարունակվող ածանցյալ գործիքը:

## 12. Այլ եկամուտ

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Եկամուտ պաշարների վաճառքից | 596,303 | 175,862 |
| Եկամուտ մատուցված ծառայություններից | 385,557 | - |
| Եկամուտ տույժերից և տուգանքներից | 92,993 | 109,916 |
| Օգուտ հիմնական միջոցների օտարումից | 21,563 | 9,892 |
| Այլ եկամուտ | 161,327 | 50,615 |
| | 1,257,743 | 346,285 |

## 13. Վարչական ծախսեր

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ | 1,971,067 | 1,031,453 |
| Վերանորոգման և պահպանման ծախսեր | 559,564 | 129,717 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 387,737 | 125,368 |
| Այլ | 1,215,414 | 596,994 |
| | 4,133,782 | 1,883,532 |

## 14. Այլ ծախսեր

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի արժեզրկում (ծնթգ. 17 և 18) | 24,486,951 | - |
| Ռոյալթիներ | 3,946,276 | - |
| Մատուցված ծառայությունների արժեքը | 380,093 | - |
| Նվիրատվություններ | 311,233 | 70,680 |
| Վաճառված պաշարների արժեքը | 241,037 | - |
| Այլ | 966,539 | 306,270 |
| | 30,332,129 | 376,950 |

## 15. Զուտ ֆինանսական ծախսեր

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Շահույթում կամ վնասում ճանաչված | | Վերահաշվարկված |
| Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով | 21,244,006 | 206,601 |
| Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից | 3,262,282 | 21,727,988 |
| Տեղանքի վերականգնման պահուստի գծով զեղչի ծախսագրում | 53,075 | 85,711 |
| | 24,559,363 | 22,020,300 |

## 16. Շահութահարկ

### (ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառելի 20% դրույքով:

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| **Ընթացիկ հարկի գծով ծախս** | | |
| Ընթացիկ տարի | (249,954) | (401,096) |
| | (249,954) | (401,096) |
| **Հետաձգված հարկի գծով փոխհատուցում/(ծախս)** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 5,256,952 | 163,814 |
| Չճանաչված ժամանակավոր տարբերությունների փոփոխություն | (4,478,922) | - |
| **Ընդամենը ծախս/(փոխհատուցում) շահութահարկի գծով** | 528,076 | (237,282) |

### Գործող հարկային դրույքի համադրում

| | 2015թ. | | 2014թ. | |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | % | հազ. դրամ | % |
| Վնաս՝ հանած հարկը | (35,772,978) | 100 | (21,913,561) | 100 |
| Հարկը՝ կիրառելի հարկային դրույքով | 7,154,596 | 20 | 4,382,712 | 20 |
| Չնվազեցվող ծախսեր | (2,147,598) | (6) | (4,619,994) | (21) |
| Չճանաչված ժամանակավոր տարբերությունների փոփոխություն | (4,478,922) | (13) | - | - |
| | 528,076 | 1 | (237,282) | (1) |

## (բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

| | Ակտիվներ | | Պարտավորություններ | | Զուտ | |
|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. | 2015թ. | 2014թ. | 2015թ. | 2014թ. |
| Հիմնական միջոցներ և հանքարդյունաբերական գույք | - | - | (104,267) | (137,109) | (104,267) | (137,109) |
| Ոչ նյութական ակտիվներ | - | 4,672 | (3,919) | - | (3,919) | 4,672 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | - | 176,349 | - | - | - | 176,349 |
| Պաշարներ | 139,853 | 3,333 | - | - | 139,853 | 3,333 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 39,567 | - | - | (55,102) | 39,567 | (55,102) |
| Վարկեր և փոխառություններ | - | 64,241 | - | - | - | 64,241 |
| Տեղանքի վերականգնման գծով պահուստ | - | 76,089 | - | - | - | 76,089 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 3,894 | 201,115 | - | - | 3,894 | 201,115 |
| Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս | 1,172,543 | 136,053 | - | - | 1,172,543 | 136,053 |
| **Զուտ հարկային պարտավորություններ** | **1,355,857** | **661,852** | **(108,186)** | **(192,211)** | **1,247,671** | **469,641** |

Խումբը ճանաչել է հետաձգված հարկային ակտիվ հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնասի գծով, հիմք ընդունելով իր բյուջեն, համաձայն որի Խումբը կունենա բավարար ապագա հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել հարկային վնասը մինչև վերջինս օգտագործելու իրավունքի ժամկետի լրանալը 2019թ-ին և 2020թ-ին: Արտադրության և վաճառքի ակնկալվող ծավալները հիմնված են գործարանի հզորության վրա, իսկ 2016թ-ից 2020թ. մետաղի գները հիմնված են մետաղի միջազգային շուկաների գների ակնկալիքների վրա:

## (գ) Հետաձգված հարկի մնացորդների շարժ

| հազ. դրամ | 1 հունվարի 2015թ. | Ճանաչված շահույթում կամ վնասում | 31 դեկտեմբերի 2015թ. |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ և հանքարդյունաբերական գույք | (137,109) | 32,842 | (104,267) |
| Ոչ նյութական ակտիվներ | 4,672 | (8,591) | (3,919) |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 176,349 | (176,349) | - |
| Պաշարներ | 3,333 | 136,520 | 139,853 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | (55,102) | 94,669 | 39,567 |
| Վարկեր և փոխառություններ | 64,241 | (64,241) | - |
| Տեղանքի վերականգնման գծով պահուստ | 76,089 | (76,089) | - |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 201,115 | (197,221) | 3,894 |
| Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս | 136,053 | 1,036,490 | 1,172,543 |
| **Զուտ հարկային ակտիվներ** | **469,641** | **778,030** | **1,247,671** |

| հազ. դրամ | 1 հունվարի 2014թ. | Ճանաչված շահույթում կամ վնասում | 31 դեկտեմբերի 2014թ. |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ և հանքարդյունաբերական գույք | 50,703 | (187,812) | (137,109) |
| Ոչ նյութական ակտիվներ | 4,672 | - | 4,672 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 155,870 | 20,479 | 176,349 |
| Պաշարներ | 6,349 | (3,016) | 3,333 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | (131,269) | 76,167 | (55,102) |
| Վարկեր և փոխառություններ | 64,241 | - | 64,241 |
| Տեղանքի վերականգնման գծով պահուստ | 105,167 | (29,078) | 76,089 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 21,093 | 180,022 | 201,115 |
| Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս | 29,001 | 107,052 | 136,053 |
| **Զուտ հարկային ակտիվներ** | **305,827** | **163,814** | **469,641** |

## (դ) Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Հիմնական միջոցներ և հանքարդյունաբերական գույք | 3,191,913 | - |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 989,539 | - |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 80,206 | - |
| Պաշարներ | 68,775 | - |
| Տեղանքի վերականգնման գծով պահուստ | 102,736 | - |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 45,753 | - |
| | **4,478,922** | - |

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը սահմանափակ չէ: Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, քանի որ քիչ հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտները:

## 17. Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Հողատարածք և շենքեր | Մեքենա-սարքավորումներ | Փոխադրա-միջոցներ | Անավարտ շինարարություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | 15,215,316 | 60,008,464 | 936,261 | 27,097,223 | 909,801 | 104,167,065 |
| Ավելացումներ | 142,651 | 8,350,213 | 118,564 | 21,253,395 | 205,023 | 30,069,846 |
| Օտարումներ | (154,420) | (505,528) | (8,249) | (124,536) | (41,496) | (834,229) |
| Փոխանցումներ | 26,780,292 | 15,271,396 | 144,120 | (43,125,987) | 930,179 | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **41,983,839** | **83,124,545** | **1,190,696** | **5,100,095** | **2,003,507** | **133,402,682** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | 41,983,839 | 83,124,545 | 1,190,696 | 5,100,095 | 2,003,507 | 133,402,682 |
| Ավելացումներ | 581,516 | 9,790,081 | 77,924 | 2,384,223 | 49,548 | 12,883,292 |
| Օտարումներ | (56,640) | (2,354,101) | (21,242) | (116,861) | (1,443,160) | (3,992,004) |
| Փոխանցումներ | 582,389 | 2,153,822 | - | (3,404,641) | 668,430 | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **43,091,104** | **92,714,347** | **1,247,378** | **3,962,816** | **1,278,325** | **142,293,970** |
| *Մաշվածություն* | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | (3,046,666) | (6,145,673) | (232,019) | - | (390,027) | (9,814,385) |
| Տարվա մաշվածություն | (279,097) | (2,311,919) | (102,756) | - | (55,897) | (2,749,669) |
| Օտարումներ | 128,414 | 330,733 | 5,682 | - | 26,584 | 491,413 |
| Փոխանցումներ | - | 5,331 | - | - | (5,331) | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **(3,197,349)** | **(8,121,528)** | **(329,093)** | **-** | **(424,671)** | **(12,072,641)** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | (3,197,349) | (8,121,528) | (329,093) | - | (424,671) | (12,072,641) |
| Տարվա մաշվածություն | (1,766,745) | (9,365,198) | (123,529) | - | (1,635,157) | (12,890,629) |
| Օտարումներ | 29,341 | 850,805 | 10,164 | - | 1,272,587 | 2,162,897 |
| Արժեզրկում | (5,873,751) | (11,448,295) | (102,537) | (577,575) | (73,103) | (18,075,261) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **(10,808,504)** | **(28,084,216)** | **(544,995)** | **(577,575)** | **(860,344)** | **(40,875,634)** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | |
| Առ 1 հունվարի 2014թ. | 12,168,650 | 53,862,791 | 704,242 | 27,097,223 | 519,774 | 94,352,680 |
| Առ 31 դեկտեմբերի 2014թ. | 38,786,490 | 75,003,017 | 861,603 | 5,100,095 | 1,578,836 | 121,330,041 |
| **Առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **32,282,600** | **64,630,131** | **702,383** | **3,385,241** | **417,981** | **101,418,336** |

9,149,299 հազար դրամ (2014թ-ին՝ 235,647 հազար դրամ) գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 385,639 հազար դրամ (2014թ-ին՝ 125,368 հազար դրամ) գումարով՝ վարչական ծախսերի կազմում, 115,768 հազար դրամ (2014թ-ին՝ չի գրանցվել) գումարով՝ պաշարների կազմում, և 3,239,923 հազար դրամ (2014թ-ին՝ 2,388,654 հազար դրամ) գումարովը՝ հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի կազմում:

Ապահովվածություն

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 813,336 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հողատարածքը (2014թ-ին՝ 813,336 հազար դրամ), 6,758,400 հազար դրամ հաշվեկշռային արժեքով մեքենա-սարքավորումները (2014թ-ին՝ 7,484,708 հազար դրամ) և 68,266 հազար դրամ հաշվեկշռային արժեքով փոխադրամիջոցները (2014թ-ին՝ 83,314 հազար դրամ) գրավադրված են բանկային վարկերի դիմաց (ծանոթագրություն 25):

**Հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի արժեզրկման ստուգում (ծանոթագրություն 18)**

2015թ. ընթացքում, հաշվի առնելով մետաղի գների էական անկումը, Խումբը որոշել է, որ գոյություն ունի արժեզրկման հայտանիշ և գնահատել է Թեղուտի հանքում պղնձի խտանյութի արտադրությանը վերաբերող հիմնական միջոցների ու հանքարդյունաբերական գույքի (ծանոթագրություն 18) փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը հիմնված էր օգտագործման արժեքի հիման վրա, որը որոշվել էր զեղչելով դրամական միջոցների ապագա հոսքերը: Գնահատման արդյունքում որոշվել էր, որ հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի հաշվեկշռային արժեքները բարձր էին վերջիններիս փոխհատուցվող գումարներից և ճանաչվել էր 24,486,951 հազար դրամ արժեզրկումից կորուստ:

Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները.

- Դրամական միջոցների հոսքերը կանխատեսվել են նախկին փորձի, փաստացի գործառնական արդյունքների և Խմբի հնգամյա գործարար ծրագրի հիման վրա: Կանխատեսումների ժամկետը ներառում է մինչև 2041թ. ընկած ժամանակաշրջանը, որից հետո որոշվում է վերջնական արժեքը:

- Օգտագործվել են «Strathcona Mineral Services Limited»-ի կողմից գնահատված 107 միլիոն տոննա պաշարները և հետագայում կանխատեսվել է գործունեության նույն ծավալը՝ հիմք ընդունելով 1991թ-ին Խորհրդային Միության պաշարների պետական հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում գրանցված մոտավորապես 454 միլիոն տոննա ընդհանուր պաշարները:

- Կանխատեսվել է, որ մշակված հանքաքարի ընդհանուր ծավալը կկազմի տարեկան 8 միլիոն տոննա, որն իրենից ներկայացնում է ներկայումս օգտագործվող հիմնական միջոցների արտադրական հզորությունը:

- Ըստ կանխատեսումների պղնձի միջին գինը կաճի՝ կազմելով 5,269 ԱՄՆ դոլար, 5,629 ԱՄՆ դոլար և 5,962 ԱՄՆ դոլար համապատասխանաբար 2016թ-ին, 2017թ-ին և 2018թ-ին և կկազմի 6,848 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար 2025թ-ին, իսկ մոլիբդենի գինը կաճի մինչև 6.5 ԱՄՆ դոլար և 8.0 ԱՄՆ դոլար համապատասխանաբար 2016թ-ին և 2017թ-ին և կկազմի 8.5 ԱՄՆ դոլար մեկ ֆունտի համար՝ հիմք ընդունելով մետաղի համաշխարհային շուկաների ակնկալիքները: Այնուհետև, կիրառվել է ԱՄՆ-ի սղաճի 2% դրույքը երկարաժամկետ հիմունքով:

- Ակնկալվում է, որ միավորի արտադրական ծախսումները, մշակման և մաքրման ծախսումները, կապիտալ ծախսումները և վարչական ծախսերը կաճեն` կիրառելով ԱՄՆ-ի սղաճի 2% դրույքը երկարաժամկետ հիմունքով:
- Կիրառվել է նախքան հարկումը գործող զեղչի դրույք 17.5% չափով: Զեղչի դրույքը որոշվել է կապիտալի միջին կշռված արժեքի հիման վրա` հաշվի առնելով պարտքի հնարավոր օգտագործման ցուցանիշը 86%-ով` 10.5% շուկայական տոկոսադրույքով:

Վերը նշված գնահատականները հատկապես զգայուն են հետևյալ ոլորտներում.

- Եթե զեղչի դրույքը ավելանա 1%-ով, ապա փոխհատուցվող գումարը կնվազի, իսկ արժեզրկումը կաճի 5,956,178 հազար դրամով:
- Եթե մետաղի կանխատեսվող գները նվազեն 5%-ով, ապա փոխհատուցվող գումարը կնվազի, իսկ արժեզրկումը կաճի 17,112,164 հազար դրամով:
- Եթե արտադրության ծավալները նվազեն 5%-ով, ապա փոխհատուցվող գումարը կնվազի, իսկ արժեզրկումը կաճի 9,402,076 հազար դրամով:

# 18. Հանքարդյունաբերական գույք

| հազ. դրամ | Ալավերդու հանքավայր | Թեղուտի հանքավայր | Ընդամենը |
|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | 1,469,861 | 20,972,393 | 22,442,254 |
| Ավելացումներ | - | 16,257,865 | 16,257,865 |
| Օտարումներ | - | (231,096) | (231,096) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **1,469,861** | **36,999,162** | **38,469,023** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | 1,469,861 | 36,999,162 | 38,469,023 |
| Ավելացումներ | - | 11,377,942 | 11,377,942 |
| Օտարումներ | - | (178,257) | (178,257) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **1,469,861** | **48,198,847** | **49,668,708** |
| *Կուտակված մաշվածություն* | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | (1,469,861) | - | (1,469,861) |
| Տարվա մաշվածություն | - | (553,811) | (553,811) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **(1,469,861)** | **(553,811)** | **(2,023,672)** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | (1,469,861) | (553,811) | (2,023,672) |
| Տարվա մաշվածություն | - | (2,553,456) | (2,553,456) |
| Արժեզրկում (ծնթգ. 17) | - | (6,411,690) | (6,411,690) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **(1,469,861)** | **(9,518,957)** | **(10,988,818)** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | |
| Առ 1 հունվարի 2014թ. | - | 20,972,393 | 20,972,393 |
| Առ 31 դեկտեմբերի 2014թ. | - | 36,445,351 | 36,445,351 |
| **Առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **-** | **38,679,890** | **38,679,890** |

2015թ. հունվարի 1-ի դրությամբ, կիրառելով ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 20-ի պահանջները, Խումբը որոշել է Թեղուտի բաց հանքի մեկ քաղաղրիչ: Արդյունահանված մեկ տոննա հանքաքարի նկատմամբ թափոնների միջին ակնկալվող հարաբերակցությունը գնահատվել է որպես 1.1:

## 19. Պաշարներ

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Պահեստամասեր | 5,761,487 | 2,143,479 |
| Հումք | 5,580,941 | 5,751,064 |
| Պատրաստի արտադրանք | 237,355 | 651,953 |
| Անավարտ արտադրանք | 70,784 | 65,908 |
| Այլ պաշարներ | 1,373,742 | 1,331,849 |
| | 13,024,309 | 9,944,253 |

## 20. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Հարկերի գծով ստացվելիք գումարներ՝ բացառությամբ շահութահարկի | 12,256,972 | 13,127,050 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր | 1,497,617 | 1,673,377 |
| Տրված կանխավճարներ | 1,346,169 | 2,189,062 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 75,711 | 354,380 |
| | 15,176,469 | 17,343,869 |

Խմբի ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին ու առևտրական և այլ դեբիտորական պարտքերին վերաբերող արժեզրկումից կորուստները ներկայացված են ծանոթագրություն 28-ում:

## 21. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Բանկային հաշիվների մնացորդներ | 3,178,747 | 2,086,207 |
| Կանխիկը դրամարկղում | 1,211 | 1,208 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություններում** | 3,179,958 | 2,087,415 |

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 28-ում:

## 22. Կապիտալ և պահուստներ

### (ա) Բաժնետիրական կապիտալ

| | Սովորական բաժնետոմսեր | |
|---|---|---|
| *Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ* | 2015թ. | 2014թ. |
| Հայտարարված բաժնետոմսեր | 5,000,000 | 5,000,000 |
| Անվանական արժեք | 1,000 ՀՀ դրամ | 1,000 ՀՀ դրամ |
| Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված | 3,069,716 | 3,069,716 |

**Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Խմբի բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

## 23. Չվերահսկվող բաժնեմասեր

Ստորև բերվող աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն նախքան ներխմբային բացառումներն էական չվերահսկվող բաժնեմաս ունեցող Խմբի դուստր կազմակերպության վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2015թ.

| հազ. դրամ | «Թեղուտ» ՓԲԸ | Ներխմբային բացառումներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Չվերահսկվող բաժնեմասի տոկոսը** | 25.05% | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | 138,633,720 | | |
| Ընթացիկ ակտիվներ | 22,569,289 | | |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | (11,536,736) | | |
| Ընթացիկ պարտավորություններ | (182,162,768) | | |
| **Զուտ ակտիվներ** | **(32,496,495)** | | |
| **Չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք** | (8,140,372) | (172,295) | (8,312,667) |
| | | | |
| Հասույթ | 51,425,617 | | |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | **(28,391,991)** | | |
| Չվերահսկվող բաժնեմասին բաշխված վնաս | (7,112,194) | (112,418) | (7,224,612) |
| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | 24,754,414 | | |
| Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից | (15,716,078) | | |
| Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից (չվերահսկվող բաժնեմասի շահաբաժիններ՝ զրո) | (7,341,453) | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)** | **1,696,883** | | |

31 դեկտեմբերի 2014թ.

| հազ. դրամ | «Թեղուտ» ՓԲԸ | Ներխմբային բացառումներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| | | | Վերահաշվարկված |
| **Չվերահսկվող բաժնեմասի տոկոսը** | 25.05% | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | 163,563,804 | | |
| Ընթացիկ ակտիվներ | 16,043,321 | | |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | (16,632,818) | | |
| Ընթացիկ պարտավորություններ | (164,262,792) | | |
| **Զուտ ակտիվներ** | **(1,288,485)** | | |
| **Չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք** | (322,765) | (765,290) | (1,088,055) |
| Հասույթ | - | | |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | (20,205,670) | | |
| Չվերահսկվող բաժնեմասին բաշխված վնաս | (5,061,521) | - | (5,061,521) |
| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | (11,736,959) | | |
| Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից | (23,082,225) | | |
| Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից (չվերահսկվող բաժնեմասի շահաբաժիններ՝ զրո) | 34,954,491 | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)** | 135,307 | | |

## 24. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը չի փոփոխվել: Խմբի նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ Խմբի պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը:

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| | | Վերահաշվարկված |
| Ընդամենը պարտավորություններ | 205,369,902 | 192,462,891 |
| Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները | (3,179,958) | (2,087,415) |
| **Զուտ պարտքը** | **202,189,944** | **190,375,476** |
| Ընդամենը սեփական կապիտալ | (31,882,470) | 3,362,432 |
| **Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **(6.3)** | **56.6** |

# 25. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 28-ում:

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| *Ընթացիկ պարտավորություններ* | | Վերահաշվարկված |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | 187,156,769 | 171,595,177 |
| Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից | 6,132,899 | 13,410,321 |
| | 193,289,668 | 185,005,498 |

**Պայմաններ և մարման ժամկետներ**

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների համար գործող պայմանները:

| | | | | 31 դեկտեմբերի 2015թ. | | 31 դեկտեմբերի 2014թ. Վերահաշվարկված | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Արժույթ | Անվանական տոկոսադր. | Մարման տարին | Անվանակ. արժեք | Հաշվեկշռ. արժեք | Անվանակ. արժեք | Հաշվեկշռ. արժեք |
| Գրավով ապահովված բանկային վարկ 1 | ԱՄՆ դոլար | 11-11.84% | 2023 | 169,052,772 | 169,052,772 | 154,722,336 | 154,722,336 |
| Գրավով ապահովված բանկային վարկ 2 | ԱՄՆ դոլար | 1M LIBOR + 6.75% | 2018 | 12,001,052 | 12,001,052 | 11,745,430 | 11,745,430 |
| Գրավով ապահովված բանկային վարկ 3 | ԱՄՆ դոլար | 10% | 2016 | 6,132,899 | 6,132,899 | 13,410,321 | 13,410,321 |
| Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից | ՀՀ դրամ | 9% | Ցպահանջ | 6,102,945 | 6,102,945 | 5,127,411 | 5,127,411 |
| | | | | 193,289,668 | 193,289,668 | 185,005,498 | 185,005,498 |

**Գրավով ապահովված բանկային վարկեր**

Գրավով ապահովված բանկային վարկ 1 իրենից ներկայացնում է «ՎՏԲ» Խմբի կողմից տրամադրված գրավով ապահովված վարկային գիծ: Վարկային գիծը բաղկացած էր երեք ենթավարկերից՝ թիվ 201, 202 և 203: Թիվ 201 և 203 ենթավարկերի պայմանագրերի համաձայն՝ պետք է կիրառվի 11% տոկոսադրույք, այնուամենայնիվ, բանկն իրավունք ունի կիրառել LIBOR USD 3 ամիս + 6.02%, այն դեպքում, եթե այն բարձր է 11%-ից: Թիվ 202 ենթավարկի պայմանագրի համաձայն՝ պետք է կիրառվի 11.84% տոկոսադրույք, այնուամենայնիվ, բանկն իրավունք ունի կիրառել LIBOR USD 3 ամիս + 8.02%, այն դեպքում, եթե այն բարձր է 11.84%-ից:

Գրավով ապահովված բանկային վարկ 1 ամորտիզացված արժեքից, որն ամորտիզացվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, նվազեցվել է նախնական 3,049,021 հազար դրամ գումարը և ներառվել է ֆինանսական ծախսերի կազմում: Այս գումարն իրենից ներկայացնում է որպես ֆինանսավորման պայմանագրի մաս «ՎՏԲ» Խմբին փոխանցված Դուստր կազմակերպության բաժնետոմսերի 25.05%-ի իրական արժեքը, որը որոշվել է վարկային պայմանագրերի ստորագրման պահին:

Բացի այդ, քանի որ որպես ֆինանսավորման պայմանագրի մաս «ՎՏԲ» Խմբին փոխանցված Դուստր կազմակերպության բաժնետոմսերի մնացած 24.9%-ը հետ կգնվի Ընկերության կողմից վարկերի ամբողջական մարումից հետո 180 օրվա ընթացքում, գնահատված հետգնման գինը ներառվել է գրավով ապահովված բանկային վարկ 1 ամորտիզացված արժեքի հաշվարկում:

Գրավով ապահովված բանկային վարկ 1 մարումները պետք է սկսվեին 2015թ. վերջում: Այնուամենայնիվ, Խումբը համաձայնացրել է բանկի հետ մարումների հետաձգումը մինչև բանկի հետ նոր պայմանագիր կնքելը: 2016թ. սեպտեմբերին Խումբը կնքել է նոր, վերաբանակցված պայմաններով պայմանագիր, որը թույլ կտա Խմբին մարել վարկերը բնականոն գործունեության ընթացքում:

Գրավով ապահովված բանկային վարկ 1 դիմաց գրավադրված են.

- Հիմնական միջոցները (ծանոթագրություն 17)
- «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի հիմնական միջոցները
- «Վալլեքս ՖՄ Իսթ.» ՍՊԸ-ի հիմնական միջոցները
- «Թեղուտ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը
- «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը
- «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ»-ի 1001 Ա դասի բաժնետոմսերը
- «Վալլեքս ՖՄ Իսթ.» ՍՊԸ-ի բաժնետոմսերի 99.999%-ը
- «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի երաշխիքը
- «Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթիդ»-ի երաշխիքը
- «Վալլեքս ՖՄ Իսթ.» ՍՊԸ-ի երաշխիքը

Գրավով ապահովված բանկային վարկ 1 պայմանագիրը ներառում է զուտ ակտիվների ավելի քան 10%-ով նվազմանը վերաբերող սահմանափակումը: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը խախտել է այս սահմանափակումը, ինչը իրավունք է տվել վարկատուին պահանջել մայր գումարի և տոկոսների ժամկետից շուտ մարումը: Արդյունքում, 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի վարկը դասակարգվել է որպես կարճաժամկետ պարտավորություն:

Գրավով ապահովված բանկային վարկեր 2 և 3 նույնպես ունեն սահմանափակումներ, որոնք 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը խախտել է, ինչը իրավունք է տվել վարկատուին պահանջել մայր գումարի և տոկոսների ժամկետից շուտ մարումը: Արդյունքում, 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի վարկերը դասակարգվել են որպես կարճաժամկետ պարտավորություն:

## 26. Տեղանքի վերականգնման գծով պահուստ – ոչ ընթացիկ

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ | 380,454 | 525,837 |
| Զեղչի ծախսագրում | 53,075 | 85,711 |
| Տեղանքի վերականգնման գծով պարտավորության նվազում | - | (231,094) |
| Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ | 433,529 | 380,454 |

Պահուստը վերաբերում է հանքի և այն տարածքների վերականգնման Խմբի պարտականությանը, որոնք վնասվում են հանքի շահագործման ու խտանյութի արտադրության ընթացքում:

Վերականգնման ծախսումները ներառում են`

- թափոնավայրը փակելու ծախսումները,
- պոչամբարը փակելու ծախսումները,
- բաց հանքը փակելու ծախսումները:

Նշված պարտականությունը կատարելու համար պահանջվող դրամական միջոցների գնահատված հոսքերի ընդհանուր գումարը կազմում է 507,570 հազար դրամ (2014թ-ին` 847,169 հազար դրամ)` ելնելով ներկայիս գներից: Դրամական միջոցների հոսքերի անվանական գումարը կանխատեսելու համար կիրառվել է Հայաստանի համար կանխատեսվող սղաճի 4% դրույքը:

11 տարվա (2014թ-ին` 12) ընթացքում կատարվելիք վերականգնման ծախսումների գծով կիրառվել է տարեկան 11.7% զեղչ (2014թ-ին` 13.9%): Պահուստի ժամկետները որոշվել են հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թափոնավայրի, պոչամբարի և բաց հանքի հետ կապված վերականգնման պարտականության կատարման ժամկետները: Զեղչի դրույքն իրենից ներկայացնում է ռիսկի գործոն չպարունակող անվանական դրույքը (ՀՀ կառավարության երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույք)` ճշգրտված երկրի անվճարունակության գործակցով:

Հաշվի առնելով պարտականության երկարաժամկետ բնույթը` պահուստի գնահատման հետ կապված հիմնական անորոշությունը վերաբերում է ապագա ծախսումներին: Շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող Հայաստանի օրենսդրությունը շարունակվում է փոփոխվել, և դժվար է որոշել նման տարածքների վերականգնման համար ներկայիս օրենսդրությամբ պահանջվող հստակ ստանդարտները: Այս ենթադրությունները կատարելիս ղեկավարությունը խորհրդակցել է իր ինժեներների և արտաքին մասնագետների հետ:

## 27. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | 5,555,233 | 1,303,005 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 4,340,287 | 2,893,895 |
| Աշխատավարձ | 916,209 | 558,996 |
| Ստացված կանխավճարներ | 65,211 | 30,480 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 145,049 | 144,240 |
| | 11,021,989 | 4,930,616 |

Խմբի ենթարկվածությունն արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 28-ում:

## 28. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

Ստորև ներկայացված է իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների վերլուծությունը:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-ին մակարդակ | 3-ին մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2015թ.** | | | | |
| Վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ | | (729,638) | | (729,638) |
| Առքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ | | 151,516 | | 151,516 |
| **31 դեկտեմբերի 2014թ.** | | | | |
| Վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ | | (273,942) | | (273,942) |
| Առքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ | | 650,424 | | 650,424 |

Պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվարկվել է կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ մետաղների շուկաներում գործող ֆորվարդային գները:

Զգայունության վերլուծություն

Պղնձի ֆորվարդային գների 10% աճը հաշվետու ամսաթվի դրությամբ կավելացներ/(կնվազեցներ) շահույթը կամ վնասը նախքան հարկումը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

| | Շահույթ կամ վնաս | |
|---|---|---|
| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
| Վաճառք | 1,848,521 | 634,409 |
| Վաճառքի ինքնարժեք | (317,702) | (708,716) |

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պղնձի ֆորվարդային գների 10% նվազումը կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարի վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

### *(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենների խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները:

### *(ii) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի հետ կապված:

Խումբը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտքային գնահատումներ իրականացվում են բոլոր պայմանագրային կողմերի համար՝ բացառությամբ կապակցված կողմերի:

**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

| | | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|---|
| հազ. դրամ | Ծնթգ. | 2015թ. | 2014թ. |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 20 | 1,497,617 | 1,673,377 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21 | 3,178,747 | 2,086,207 |
| | | 4,676,364 | 3,759,584 |

**Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Խմբի հասույթի 99%-ը վերագրելի է երկու պատվիրատուների հետ իրականացվող վաճառքի գործարքներին:

Խումբը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Խմբի գնահատականը:

Առևտրական դեբիտորական պարտքերն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են խոշոր հայկական բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ վերջիններս չեն կատարի իրենց պարտականությունները:

***(iii) Իրացվելիության ռիսկ***

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Խումբը վերահսկում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող դրամական միջոցների ներհոսքի ու առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի գծով ակնկալվող դրամական միջոցների արտահոսքի չափը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

2015թ.

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր | Ցպահանջ | Մինչև 2 ամիս |
|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Գրավով ապահովված բանկային վարկ 1 | 169,052,772 | 189,674,041 | 189,674,041 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ 2 | 12,001,052 | 12,001,052 | 12,001,052 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ 3 | 6,102,945 | 6,102,945 | 6,102,945 | - |
| Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից | 6,132,899 | 6,132,899 | 6,132,899 | - |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 4,340,287 | 4,340,287 | - | 4,340,287 |
| | 197,629,955 | 218,251,224 | 213,910,937 | 4,340,287 |

2014թ.

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր | Ցպահանջ | Մինչև 2 ամիս |
|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Գրավով ապահովված բանկային վարկ 1 | 154,722,336 | 181,538,455 | 181,538,455 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ 2 | 11,745,430 | 11,745,430 | 11,745,430 | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ 3 | 5,127,410 | 5,127,410 | 5,127,410 | - |
| Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից | 13,410,321 | 13,410,321 | 13,410,321 | - |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 2,893,895 | 2,893,895 | - | 2,893,895 |
| | 187,899,392 | 214,715,511 | 211,821,616 | 2,893,895 |

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

### *(iv) Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

#### Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածությունը կապված է վերջինիս ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների հետ: Այս գործարքներն հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Փոխառությունների գծով տոկոսներն արտահայտվում են փոխառության արժույթով: Որպես կանոն փոխառություններն արտահայտվում են այն արժույթով, որը համապատասխանում է Խմբի գործառնություններից առաջացող դրամական միջոցների արժույթին՝ հիմնականում ԱՄՆ դոլարին: Այսպիսով, առաջանում է տնտեսական հեջավորում՝ առանց ածանցյալ գործիքների պայմանագրեր կնքելու անհարժեշտության:

#### *Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին*

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին:

| հազ. Դրամ | ԱՄՆ դոլարով արտահայտված 2015թ. | ԱՄՆ դոլարով արտահայտված 2014թ. |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,677,784 | 1,588,783 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 1,326,386 | 1,328,771 |
| Գրավով ապահովված բանկային վարկեր (վերահաշվարկված) | (187,156,769) | (171,595,177) |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | (426,985) | (783,543) |
| **Զուտ ենթարկվածություն** | **(183,579,584)** | **(169,461,166)** |

#### *Զգայունության վերլուծություն*

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Խումբը դիտարկում է որպես խելամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| հազ. դրամ | Արժևորում<br>Շահույթ կամ վնաս | Արժեզրկում<br>Շահույթ կամ վնաս |
|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2015թ.** | | |
| ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ | 18,357,958 | (18,357,958) |
| **31 դեկտեմբերի 2014թ.** | | |
| ՀՀ դրամի 20% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ | 33,892,233 | (33,892,233) |

### *(v) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկի կամ փոխառության դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

#### *Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին*

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2015թ. | 2014թ. |
| **Ֆիքսված դրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական պարտավորություններ | 12,235,844 | 18,537,732 |
| | 12,235,844 | 18,537,732 |
| **Փոփոխական դրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական պարտավորություններ (վերահաշվարկված) | 181,053,824 | 166,467,766 |
| | 181,053,824 | 166,467,766 |

#### Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքները որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

#### Դրամական միջոցների զգայունության վերլուծություն փոփոխական դրույքով գործիքների համար

Ղեկավարությունը գտնում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ LIBOR-ի ողջամիտ հնարավոր փոփոխությունն էական ազդեցություն չի ունենա Խմբի 2015թ. և 2014թ. շահույթի կամ վնասի վրա:

# 29. Պայմանական դեպքեր

## (ա) Շրջակա միջավայրի պահպանության

Խմբի գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կառավարում են օդը և ջուրը աղտոտող նյութերի արտանետումը, վնասակար նյութերի ու թափոնների և այլ թունավոր նյութերի արտադրությունը, գործածումը, պահպանումը և արտանետումը: Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության պահանջներին, այդ իսկ պատճառով, Խումբը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարությունը հավանական չի համարում նման պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Անյուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող օրենսդրությունը զարգացման փուլում է Հայաստանում, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների փոփոխությունները կարող են առաջացնել էական պարտավորություններ ապագայում:

## (բ) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև ապահովագրված չէ գործունեության ընդհատումից: Քանի դեռ Խմբի համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## (գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել:

Բացի այդ, վերջերս հարկային մարմիններն ավելի խիստ մոտեցում են կիրառում Հայաստանի որոշ հանքարդյունաբերական ընկերությունների նկատմամբ ռոյալթիների վճարման հետ կապված, որի արդյունքում ռոյալթիների գումարները զգալիորեն աճել են՝ ի հակադրություն հանքարդյունաբերական ընկերությունների մեծամասնության կողմից (ներառյալ՝ Խումբը) կիրառվող ռոյալթիների հաշվարկի մեթոդի: Ղեկավարությունը մանրակրկիտ կերպով վերլուծել է այս դեպքերը և գտնում է, որ հարկային մարմինների այս դիրքորոշումը չի համապատասխանում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 30. Գործառնական ռիսկեր

### (ա) Հանքեր

Հանքերն ըստ իրենց էության ենթարկվում են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Խմբի վերահսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Խմբի գործունեության, գործառնական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. (i) գրունտի և ջրի անկանխատեսելի պայմաններ և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ հայցեր, (ii) երկրաբանական խնդիրներ, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման այլ գործընթացների հետ կապված խնդիրներ, (iv) արտասովոր եղանակային կամ գործառնական պայմաններ և այլ ֆորս-մաժորային իրադարձություններ, (v) հանքաքնյութի ակնկալվողից ցածր չափաքաժին կամ վերականգնման դրույքներ, (vi) վթարներ, (vii) կառավարության կողմից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին տրամադրում կամ ընդհանրապես չտրամադրում, (viii) դատական վարույթների արդյունքներ, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկումը, (ix) հետախուզման և մշակման աշխատանքների հետ կապված անորոշություններ, (x) փոխադրման ուշացումներ, (xi) աշխատանքային վիճաբանություններ, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթի ձեռք բերելու անկարողություն, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայություն, (xiv) գործունեության հատկորոշումների կամ ակնկալիքների համաձայն սարքավորումների աշխատելու կամ գործընթացների ընթանալու անկարողություն, (xv) անկանխատեսելի դժվարություններ՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքներ և ֆինանսական շուկայի պայմաններ:

### (բ) Պղնձի և մոլիբդենի գների տատանումներ

Խմբի ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Խմբի վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (ԼՄԲ), Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Շանհայի ֆյուչերսների բորսայում (ՇՖԲ): Խումբը պղինձը վաճառվում է ԼՄԲ-ի գնանշվող գներով: Այս բորսայում ներկայացվող պղնձի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) պղնձի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ինդուստրիալ արտադրության միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնք բոլորը կապակցված են պղնձի պահանջարկի հետ, (iii) Չինաստանի տնտեսական աճն ու քաղաքական պայմանները, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը, և այլ զարգացող տնտեսությունները, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) արատրժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային

բնույթով: 2015թ. ընթացքում ԼՄԲ-ի օրվա վերջի փակման սփոթ գինը մեկ տոննա պղնձի համար տատանվել է 4,515 ԱՄՆ դոլարից 6,445 ԱՄՆ դոլարի: 2016թ. նոյեմբերի 17-ին ԼՄԲ-ի փակման սփոթ գինը մեկ տոննա պղնձի համար կազմել է 5,457 ԱՄՆ դոլար:

Խմբի ապագա ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է նաև մոլիբդենի գնից: Մոլիբդենի գինը փոփոխական և ցիկլային է ինչպես պղնձինը, եթե ոչ ավելի: Մոլիբդենի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) մոլիբդենի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, հատկապես շինարարության և ենթակառուցվածքների ոլորտում, որոնք պահանջում են պողպատի զգալի պաշարներ, (iii) որպես պղնձի արտադրության հավելյալ արտադրատեսակ արտադրվող մոլիբդենի ծավալները, (iv) պաշարների չափերը, (v) արատրժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը և (vi) ԱՄՆ-ի և արտերկյա մրցակիցների արտադրական ծախսերը: Մոլիբդենի պահանջարկը զգալիորեն կախված է համաշխարհային մասշտաբով պողպատի արդյունաբերությունից, որը այս մետաղը օգտագործում է որպես կարծրացնող և քայքայումը կանխարգելող նյութ: Մոլիբդենի արտադրության մոտավորապես 80 տոկոսը օգտագործվում է այս նպատակի համար: Մնացած պաշարներն օգտագործվում են մասնագիտացված քիմիկատների, մասնավորապես, կատալիզատորների, ջրազերծման ռեակտիվների, քսանյութերի արտադրությունում: Մոլիբդենի համաշխարհային պաշարների մոտավորապես 65 տոկոսը հանդիսանում է պղնձի արդյունահանման հավելյալ արտադրանք, որն այդքան էլ մեծ ազդեցության չի ենթարկվում մոլիբդենի գներից: 2015թ. ընթացքում մոլիբդենի միջին գինը կազմել է 14,793 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար՝ ի համեմատություն 2014թ-ին գրանցված 24,919 ԱՄՆ դոլարի մեկ տոննայի համար: 2016թ. նոյեմբերի 17-ին ԼՄԲ-ի փակման սփոթ գինը մեկ տոննա մոլիբդենի համար կազմել է 14,750 ԱՄՆ դոլար:

Մոլիբդենի և պղնձի ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի շահույթի և դրամական միջոցների հոսքերի վրա:

## 31. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Խմբի միակ բաժնետեր և վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը:

### (բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

### *(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը*

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

| հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևավճարներ | 814,699 | 376,826 |

## (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

| հազ. դրամ | Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2015թ. | 2014թ. | 2015թ. | 2014թ. |
| **Ապրանքների և ծառայությունների վաճառք** | | | | |
| Վաճառք | 898,809 | 690,396 | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | | | 68,810 | 42,457 |
| Ստացված կանխավճարներ | | | 46,912 | 29,095 |
| **Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում** | | | | |
| Ձեռքբերում | 20,107,052 | 15,826,748 | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | | | 724,942 | 283,253 |
| Կրված կանխավճարներ | | | 223,302 | 1,049,780 |
| **Ստացված վարկեր և փոխառություններ** | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 3,186,000 | 11,627,650 | 6,132,899 | 13,410,322 |
| Տոկոսային ծախս | 752,254 | 790,678 | | |
| **Տրված նվիրատվություններ** | | | | |
| Տրված նվիրատվություններ | 188,473 | - | - | - |

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ: Կապակցված կողմերի պարտքերի հետ կապված հաշվետու տարվա կամ նախորդ տարվա ընթացքում չեն ճանաչվել ծախսեր անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի կապակցված կողմերից ստացված երաշխիքներ (ծանոթագրություն 25):